ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Հրաչիկ Միերյանը, Մյասնիկ Պողոսյան ը, Թեհմինե Պողոսյանը, Համլետ Սահակյանը

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նորային Հակոբյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արայիկ Ավետիսյանը</u>

Լսեցին

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԵԼԻԽԱՆ ՄՈՒՔՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22.04.2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 16 -Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ Կառավարության 08.04. 2021 թվականի N 515-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի **ավագանին որոշում է՝**

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի «Նորաշեն բնակավայրի Վելիխան Մուքոյանի անվան մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի, սոցիալական աջակցության բաժնին՝ նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ գյուղական համայնքի ավագանու 22.04.2016 թվականի N 16 -Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99-Ն/

Լսեցին

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՅՈՒՐԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԾԱՂԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.05.2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 36 -Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ Կառավարության 08.04. 2021 թվականի N 515-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի **ավագանին որոշում է՝**

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի « Գեղաձոր բնակավայրի Յուրիկ Կիրակոսյանի անվան մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի, սոցիալական աջակցության բաժնին՝ նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 30.05.2018 թվականի N 36 -Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100-Ն/

Լսեցին

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲԺՇԿՅԱՆ ՓՈՂՈՑ 9-ՐԴ ՇԵՆՔ 9-ՐԴ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱԶԱՏ ՀԱԿՈԲԻ ԲԵՍԱԼՅԱՆԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ բնակավայրի Բժշկյան փողոց 9-րդ շենք 9-րդ բնակարանը նվիրաբերության կարգով Ազատ Հակոբի Բեսալյանին տրամադրելու մասին Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի Բժշկյան փողոցի 9-րդ շենքի 9-րդ բնակարանը / 75,72 քմ / նվիրաբերել տվյալ բնակարանում փաստացի բնակվող Ազատ Հակոբի Բեսալյանին:

2. Ազատ Հակոբի Բեսալյանին պարտավորեցնել պարտադիր կարգով պահպանել բնակարանի շահագործումը, նորոգման կանոնները ու նորմերը, որոնք սահմանված են պետական բնակարանային ֆոնդի բնակարանների պահպանության պահանջներով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Ն/

Լսեցին

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱԴԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՆՅԱ ՄԱՔՍԻՄԻ ԳԱԼՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 02-030-0103-0096 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,17661 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի, « Քաղաքաշինության մասին » ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղադիր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Վանյա Մաքսիմի Գալոյանին սեփականություն իրավունքով պատկանող, 02-030-0103-0096 կադաստրային ծածկագրով 0,17661 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել, այն դարձնել, որպես բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, Ծաղկահովիտ համայնքի ավագանին, **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2023 թվականի դեկտեմբերի 21-ը, ժամը 14:00-ն:

2. Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ գ.Ծաղկահովիտ, Հոկտեմբերյան փողոց 2:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-0 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108-Ն/

Լսեցին
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N 67-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, « Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ծաղկահովիտի համայնքապետարանի համայնքային կառավարման տեղեկատվական համակարգում նոր չափորոշիչներով ներդրվել և գործարկվում է սոցիալական աջակցության տրամադրման առցանց հարթակ, համայնքի **ավագանին որոշում է՝**

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման կարգը համապատասխանեցնել համայնքապետարանի համայնքային կառավարման տեղեկատվական համակարգում նոր չափորոշիչներով ներդրված և գործարկվող սոցիալական աջակցության տրամադրման առցանց հարթակին և սահմանել նոր կարգ՝ համաձայն հավելվածի :

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 24-ի N 67-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ն/

Լսեցին

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԷԴԳԱՐ ՄՆՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, 90-րդ հոդվածի 4-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեում կատարել վերաբաշխումներ՝

ա/ **01** բաժնի **01** խմբի **01** դասի (Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում) գործառնական դասակարգման **4111** (Աշխատողների աշխատավարձ և հավելավճարներ) տնտեսագիտական հոդվածի պլանից նվազեցնել **12 910 345** (տասներկու միլիոն ինը հարյուր տաս հազար երեք հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ ծախս, **4264** (Տրանսպորտային նյութեր) տնտեսագիտական հոդվածի պլանից նվազեցնել **3 000 000** (երեք միլիոն) ՀՀ դրամ ծախս,

բ/ **08** բաժնի **02** խմբի **03** դասի (Ծաղկահովիտի մշակույթի տուն) գործառնական դասակարգման **4521** (Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածի պլանից նվազեցնել **1 168 140 (մեկ միլիոն մեկ հարյուր վաթսունութ հազար մեկ հարյուր քառասուն)** ՀՀ դրամ ծախս,

գ/ **09** բաժնի **01** խմբի **01** դասի (Վարդաբլուրի մանկապարտեզ) գործառնական դասակարգման **4521** (Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածի պլանից նվազեցնել **421 515 (չորս հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր տասնհինգ)** ՀՀ դրամ ծախս,

դ/ **09** բաժնի **08** խմբի **01** դասի (Նորաշենի մանկապարտեզ) գործառնական դասակարգման **4521** (Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածի պլանին ավելացնել **4 000 000 (չորս միլիոն)** ՀՀ դրամ ծախս,

ե/ **09** բաժնի **01** խմբի **01** դասի (Հնաբերդի մանկապարտեզ) գործառնական դասակարգման **4521** (Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածի պլանին ավելացնել **4 000 000 (չորս միլիոն)** ՀՀ դրամ ծախս,

զ/ **09** բաժնի **01** խմբի **01** դասի (Գեղաձորի մանկապարտեզ) գործառնական դասակարգման **4521** (Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածի պլանին ավելացնել **1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար)** ՀՀ դրամ ծախս,

է/ **09** բաժնի **01** խմբի **01** դասի (Ծաղկահովիտի մանկապարտեզ) գործառնական դասակարգման **4521** (Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածի պլանին ավելացնել **5 000 000 (հինգ միլիոն)** ՀՀ դրամ ծախս,

ը/ 01 բաժնի 01 խմբի 01 դասի (Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում) գործառնական դասակարգման 4212 (Էներգետիկ ծառայություններ) տնտեսագիտական հոդվածի պլանին ավելացնել **3 000 000 (երեք միլիոն)** ՀՀ դրամ ծախս:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 62-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի 2023 թվականի նոյեմբերի 23-ի հերթական նիստի օրակարգը՝
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման կարգը սահմանելու և Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 24-ի N 67-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի «Ծաղկահովիտ բնակավայրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու և Ծաղկահովիտի գյուղական համայնքի ավագանու 22.04.2013 թվականի թիվ 2/2 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի «Հնաբերդ բնակավայրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու և Հնաբերդի գյուղական համայնքի ավագանու 21.02.2013 թվականի թիվ 6 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի << Նորաշեն բնակավայր Վելիխան Մուքոյանի անվան մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու և Նորաշենի գյուղական համայնքի ավագանու 22.04.2016 թվականի թիվ 16 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի «Գեղաձոր բնակավայրի Յուրիկ Կիրակոսյանի անվան մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու և Ծաղկահովիտ համայնքի ավագանու 30.05.2018 թվականի թիվ 36 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
7. «Հանրապետություն» կուսակցության ընտրական ցուցակով ընտրված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու անդամներ՝ Համլետ Վազգենի Սահակյանի և Թեհմինե Զավենի Պողոսյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին
8. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի Բժշկյան փողոց, 9-րդ շենք 9-րդ բնակարանը Ազատ Հակոբի Բեսալյանին նվիրաբերելու մասին
9. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղադիր բնակավայրի բնակիչ՝ Վանյա Մաքսիմի Գալոյանին սեփականության իրավունքով պատկանող 02-030-0103-0096 կադաստրային ծածկագրով 0,17661 հա հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին
10. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Լեռնապար բնակավայրում 250 գծամետր ջրագիծ կառուցելու համար գումար հատկացնելու մասին
11. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող Լեքսուս 470 մակնիշի 527 ԼԼ 70 հաշվառման համարանիշի ծառայողական ավտոմեքենայի համար ավտոմասեր ձեռք բերելու նպատակով գումար հատկացնելու մասին
12. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեում վերաբաշխում կատարելու մասին

. Լեռնադահուկորդների հայկական ասոցիացիայի կողմից ներկայացված դիմում առաջարկը քննարկելու մասին
14.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանելու մասին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ն/

Լսեցին
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22.04.2013 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2/2 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ Կառավարության 08.04. 2021 թվականի N 515-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի **ավագանին որոշում է՝**

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի «Ծաղկահովիտ բնակավայրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի, սոցիալական աջակցության բաժնին՝ նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ գյուղական համայնքի ավագանու 22.04.2013 թվականի N 2/2 -Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ն/

Լսեցին
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՆԱԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21.02.2013 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ Կառավարության 08.04. 2021 թվականի N 515-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի **ավագանին որոշում է՝**

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի «Հնաբերդ բնակավայրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի, սոցիալական աջակցության բաժնին՝ նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը օրենսդրությամբ սահմանված կարգով

ներկայացնել պետական գրանցման:

3.Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզի Հնաբերդ գյուղական համայնքի ավագանու 21.02.2013 թվականի N 6 -Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98-Ն/

Լսեցին

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ՀԱՄԼԵՏ ՎԱԶԳԵՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՎ ԹԵՀՄԻՆԵ ՋԱՎԵՆԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ, 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով «Հանրապետություն » կուսակցության ընտրական ցուցակով ընտրված Ծաղկահովիտ համայնքի ավագանու անդամներ՝ Համլետ Վազգենի Սահակյանի և Թեհմինե Ջավենի Պողոսյանի մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով ավագանու նիստերից բացակայելու հիմքով նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը , **համայնքի ավագանին որոշում է՝**

1. «Հանրապետություն » կուսակցության ընտրական ցուցակով ընտրված ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու անդամներ՝ Համլետ Վազգենի Սահակյանի և Թեհմինե Ջավենի Պողոսյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել:
2. Համայնքի ղեկավարին՝ ավագանու անդամներ՝ Համլետ Սահակյանի և Թեհմինե Պողոսյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ կայացված որոշման մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում տեղեկացնել թիվ 17 ընտրատարածքային հանձնաժողովին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-2 Դեմ-9 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ն/

Լսեցին

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՊԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 250 ԳԾԱՄԵՏՐ ՋՐԱԳԻԾ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 89-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից կազմված աշխատանքների ծավալաթերթը, ինչպես նաև Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Լեռնապար բնակավայրում 250 գծամետր ջրագիծ կառուցելու համար հատկացնել 442.000 /չորս հարյուր քառասուներկու հազար / ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ն/

Լսեցին
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԼԵՔՍՈՒՍ 470 ՄԱԿՆԻՇԻ 527 ԼԼ 70 ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԱՍԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Ծաղկահովիտի համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող Լեքսուս 470 մակնիշի, 527 ԼԼ 70 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի համար ավտոմասեր ձեռք բերելու անհրաժեշտության մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող Լեքսուս 470 մակնիշի, 527 ԼԼ 70 հաշվառման համարանիշի ծառայողական ավտոմեքենայի համար ավտոմասեր / մեկնարկիչ, 4 հատ ձմեռային անվադողեր և ոտնատակեր/ ձեռք բերելու նպատակով համայնքի բյուջեից հատկացնել 582.000 / հինգ հարյուր ութսուներկու հազար / ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105-Ն/

Լսեցին
ԼԵՌՆԱԴԱՀՈՒԿՈՐԴՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄ ԱՌԱՋԱՐԿԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով լեռնադահուկորդների հայկական ասոցիացիայի հիմնադիր՝ Հովհաննես Մարտիրոսյանի գրավոր դիմումը, ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը. ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Քննարկել Արագած լեռան լանջերում լեռնադահուկային սպորտով զբաղվելու, ուսումնամարզական հավաքների ու ներգնա հյուրերի համար բազային ճամբար / կացարան/ կառուցելու և այդ նպատակով անհրաժեշտ հողատարածք վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ լեռնադահուկորդների հայկական ասոցիացիայի կողմից ներկայացված դիմում առաջարկը :
2. Հանձնարարել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսության բաժնին՝
- ուսումնասիրել տեղանքը, պարզել հողատարածքի գտնվելու վայրը և պատկանելիությունը, կադաստրային ծածկագիրը և կատարել անհրաժեշտ չափագրումներ հողատարածքը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու համար :
- աշխատանքները ավարտելուց հետո ավագանու հաստատմանը ներկայացնել հողատարածքը լեռնադահուկորդների հայկական ասոցիացիային վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու համար հավանություն տալու հարցը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ն/

Ավագանու անդամներ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԲՈՅԱՋՅԱՆ

ԲԱՎԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՐՈՒԹ ԹԵՐՋՅԱՆ

ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՈՌ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՂԱՋԱՐՅԱՆ

ՄԻՇԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Արայիկ Ավետիսյանը_____